

# Օտարերկրյա պետությունների թղթադրամների ընդունման վերաբերյալ մեթոդական ուղեցույց

«Ամերիարանկ» ՓԲԸ-ն ընդունում է օտարերկրյա պետությունների (օտարերկրյա պետությունների խմբի) այն թղթադրամները (խոսքը վերաբերում է միայն ԱՄՆ դոլարին (USD), Եվրոյին (EUR), Բրիտանական ֆունտ ստեռլինգին (GBP), Շվեյցարական ֆրանկին (CHF), Կանադական դոլարին (CAD), Ռուսական ռուբլի (RUB) և Ավստրալական դոլարին (AUD)), որոնք համապատասխանում են հետևյալ պահանջներին.

**Արտարժույթային թղթադրամները համարվում են վճարունակ, սակայն հնամաշ, եթե.**

- վնասված են (ունեն 0,5 սմ և ավելի պատռվածքներ)
- ամբողջական չեն, սակայն պահպանվել է թղթադրամի ընդհանուր մակերեսի՝ 80%-ից ավելին
- թղթադրամի ընդհանուր մակերեսի 80% -ից ավելին ամբողջական է



- ունեն սոսնձված կամ այլ կերպ փակցված (օրինակ՝ կաշուն ժապավենով) անկյուններ կամ այլ հատվածներ
- որոնց վրա առկա են բծեր, գրառումներ (թվեր, գրառումներ թղթադրամի այն մասում, որտեղ չկա պատկեր, այդ թվում՝ նաև ուլտրամանուշակագույն ճառագայթների ներքո երևացող)



- ունեն դրոշմի և դրոշմակնիքի՝ չորսից ավելի հետքեր թղթադրամի դարձերեսի վրա (ոչ ավելի, քան 3 սմ ), իսկ դիմերեսի վրա երկուսից ավել փոքր հետքեր
- թղթադրամի վրա գրվածը գերազանցում է 1,5 սմ
- 5 հատ փոքր ասեղի չափ կամ աննշան ծակծկված են
- դակված,
- մինչև 1995թ. և ներառյալ տարեթվերին թողարկված ԱՄՆ դոլարի թղթադրամներ են:



Հնամաշ թղթադրամները, Ամերիաբանկի կողմից գնվում են՝ կիրառելով տվյալ պահին հնամաշների համար գործող սակագները:

**Արտարժույթային թղթադրամները համարվում են պիտանի շրջանառության համար, եթե.**

- պահպանվել են հիմնական վավերապայմանները՝ թողարկողի անվանումը, դրամանիշի համարը և սերիան, անվանական արժեքը թվերով և տառերով, դիմերեսի և դարձերեսի հիմնական պատկերը
- առկա են կեղծիքի դեմ պաշտպանիչ նշանները (օրինակ՝ մագնիսային նշաններ՝ թղթի մեջ ներկառուցված գունավոր մանրաթելեր, ներառյալ՝ ուլտրամանուշակագույն ճառագայթների ներքո տեսանելի մանրաթելերը, բազմերանգ ներդրված մանրաթելերը, պաշտպանիչ ներգծերը, մանրատառաշարը և այլն)
- դրամանիշը վնասված չէ, առկա չեն վավերապայմանների քերման կամ ջնջման հետքեր:

### **Թղթադրամները ենթակա չեն գնման կամ փոխանակման, եթե**

- գունաթափված են կամ ներկոտված,
- կրում են ջերմային, քիմիական, խոնավության ազդեցության հետքեր:
- պահպանված չէ ամբողջական թղթադրամի ութսուն տոկոսը

### **Թղթադրամները համարվում են անվճարունակ եթե.**

- կրում են պաշտպանական հատկանիշների միտումնավոր հեռացման հետքեր՝ հեռացված է փայլաթիթեղը (կինեգրաման), պատուհանաձև կամ թաքնված ներգիծը և այլն
- ամբողջությամբ բացակայում է թղթադրամի փայլաթիթեղը պարունակող հատվածը՝ անկախ թղթադրամի ամբողջական ընդհանուր մակերեսի 80%-ը պահպանված լինելը: